ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2739-Ա « 09 » հուլիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի Հ.4242-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևանի քաղաքապետի 2012 թվականի փետրվարի 15-ի հ.1473-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.3 շենքի հետևի մասում գտնվող ավտոտնակի զբաղեցրած հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, պայմանագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու և հասցե տրամադրելու մասին» հ.4242-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի 1-ին պարբերությունում «Սառա Մաթևոսյանի» բառերը փոխարինել «Սառա Մաթևոսյանի լիազորված անձ Մարիաննա Մխիթարյանի» բառերով.

2) որոշման նախաբանի 3-րդ պարբերությունում «Երևան քաղաքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածով» բառերը փոխարինել «Երևան քաղաքի ավագանու 2024թ. դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածով» բառերով.

3) որոշման 2-րդ կետում «Ռոման Համբարձումյանին» բառերը փոխարինել «Ալբերտ Հովասափյանին» բառերով.

4) որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետում «1-ին կետի համաձայն» բառերը փոխարինել «3-րդ կետի գ ենթակետի համաձայն» բառերով.

5) որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետում «2021թ. դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածի 38-րդ կետի» բառերը փոխարինել «2024 թ. դեկտեմբերի 24-ի հ.259-Ն որոշման հավելվածի 40-րդ կետի» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ